

ՄԵԼԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարեկան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիային իմպրագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.

Կամ Tiflis, Rédaction „Mschak“.

Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տոն օրերէն)

Կայտադրութիւնը ընդունվում է առանձին լեզուով.

Կայտադրութիւնների համար վճարում են
խրաւրանչիւր բաւին 2 կոպէկ.

Տէլէֆոն № 253.

Հ Ր Մ Ն Ա Գ Ի Ր Գ Ր Ի Գ Ո Ր Ա Ր Ծ Ր Ո Ւ Ն Ի

Հինգշաբթի օր, յուլիսի 29-ին, իշխանուհի

ՍԱԼՈՍԷ ԴԱԻԹ. ԱՐԴՈՒԹԵԱՆ-ԵՐԿԱՅՆԱԲԱԶՈՒԿԻ

մահվան տարեգարծի օրը, Երևան քաղաքի ս. Պողոս-Պետրոս եղեղեցում, առաւօտեան
ժամի 8-ին, տեղի կունենայ պատարագ և ապա հոգեհանգիստ:

1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Չարիքի դէմ.—Ներքին Տեսչութիւն. Մեր
նախարարին նախադրեցին. Նամակ Բագրիւն.
Ներքին լուրեր.—ԱՐՏԱՐԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Լու-
րեր թիւրքաց Հայաստանից. Նամակ Փրանսիա-
յից. Նամակ Պարսկաստանից.—Արտաքին լու-
րեր.—ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԶԱՐԻՔԻ ԴԵՄ

Փրանսիական սենատը, ինչպէս հաղոր-
դում են լրագիրները, մտադրութիւն ունի
առաջարկել օրէնսդրական ճանապարհով
մի քանի զապողական պատիժներ, ուղղված
մամուլի դէմ: Սենատի հանրապետական
կուսակցութիւնները, ստուծ են, ուրախու-
թեամբ յանձն են առել պաշտպանել
և անցկացնել մի այդպիսի օրէնագիծ:
Միայն այս հանգամանքը բաւական է ցոյց
տալու համար, թէ անազնիւ մամուլը ինչ
ահռելի չարիքի կերպարանք է ստացել
Փրանսիայում:

Եւ իրաւ, վերջին երկու տարիների անց-
քերը հաստատում են, որ Փրանսիական ա-
զատութիւնը չափազանց խիստ կերպով
ի չարն են դործ դնում լրագիրները: Փր-
անսիայում ոչ մի անձ, որքան էլ բարձր
գիրք գրաւելու լինի, չէ պաշտպանված
մամուլի յարձակումներից. նոյն իսկ պե-
տութեան գլուխը, հանրապետութեան
նախագահը, չունի ոչ մի երաշխաւորու-
թիւն թէ առաւօտեան լրագիրներ կար-
գալիս նա չի հանդիպի նրանց մէջ ամե-
նայանդուհն վերադարձներ, ուղղած իր
անձի դէմ: Յայտնի է նոյնպէս, թէ Փրան-
սիական մամուլի մէջ որքան զարգացած է
շանտաժը, կառաւակներութիւնը. և այդ
յատկութիւնների շնորհիւ նա միւրեց-
նում է հասարակութիւնը, գրգռում է
կրքերը, յարուցանում է ամբողջ փոթորիկ-
ներ: Աւելացրէք այդ ամենի վրա և այն
հանգամանքը, որ հանրապետութեան վը-
տանք է սպառնում, որ կառավարութեան,
պարլամենտի, բոլոր վարչական և դատա-
տանական հիմնարկութիւնների դէմ մղու-
վում է մի անընդար պատերազմ, որ ան-
ւանարկում է տիրող պետական կարգերը,
ոչնչացնում է ժողովրդի պատահութիւնն
ու հաւատը և այդպիսով հող է պատրաս-
տում քաղաքական փոփոխութիւնների հա-
մար: Այս բոլորը նկատի առնելով, առա-
ջին անգամից խելացի է համարվում սե-
նատի մտադրութիւնը, որը եթէ իրա-
դործվի, պիտի անշուշտ սահմանափակու-
ման առաջացնէ մամուլի ազատութեան
դէմ:

Սակայն հաղորդվում է և այն լուրը,
որ Փրանսիական պարլամենտը կընդգիմա-
նայ սենատի ծրագրին: Այս էլ շատ հաս-
կանալի է: Ազատ մամուլը այնքան մեծ
ծառայութիւններ է մատուցել Փրան-
սիային, որ հազիւ թէ զանգնէ շատ այն-
պիսի պատգամաւորներ, որոնք համաձայն-
վեն անտես անել այդ ծառայութիւնները,
մանաւանդ այժմ, երբ տպագրական ա-
զատ խօսքի յաղթանակը ամբողջ աշխար-
հի աչքի առաջ է: Դրէյֆուսի դործը
խոշոր տեղ կը բռնէ Փրանսիայի ժամանա-
կակից պատմութեան էջերում. նա կը
մերկացնէ շատ ու շատ վերքեր, որոնք

թաղնված էին Փրանսիայի օրգանիզմի մէջ.
բայց մի և նոյն ժամանակ նա մի կենդա-
նի ապացոյց կը լինի, որ եթէ լոյսը, վերջ
ի վերջոյ, յաղթող հանդիսացաւ, դրա ա-
մենագլխաւոր պատճառը մամուլն է իր
բոլոր օրգաններով, ինչն նրանք ազնիւ,
անշահասէր, թէ կեղտոտ և շանտաժիստ:
Իրազրական անօրինակ խիստ բանական
էր, որ կամայ կամայ բաց արաւ հասա-
րակութեան աչքը և մի երկիր, որ տարի
ու կէս առաջ լսել անգամ չէր ուզում թէ
ձօլան ճշմարտութեան պաշտպան է, այ-
սօր կատարեալ հանգստութեամբ է վերա-
բերվում այն իրողութեան, որ վճռաջինջ
ատենաք խոստովանել է Դրէյֆուսի ան-
մեղութիւնը: Բայց այդպիսի մի դրութիւն
ստեղծելը հեշտ չէր. դրա համար հար-
կաւոր էր ամիսների երկար, կատարի մը-
րութիւն, հարկաւոր էր որ մամուլը լար-
ման ծայրագոյն աստիճանին հասնէ իր
մարտնչող և հակադրող ընդունակութիւն-
ները: Եթէ ամենայն իրաւունքով ասում
են, որ արդարադատութիւնը միայն Փրան-
սիայում կարող էր այդպիսի մի հակադրական
յաղթանակ տանել, չը պիտի մոռանան և
այն, որ այդ յաղթանակը պատրաստողը,
հաստատուն հիմքերի վրա դնող մամուլն
էր: Վարդուց տպագրական խօսքը այդքան
վիթխարի ոյժ չէր ցոյց տուել վաղուց մի
դատարկ ձայն էր դարձել այն ասացածը
թէ մամուլը եթէ անբողբոյս մեծ պետու-
թիւն է: Քսանթերոզ դարի շէնքում նո-
րից վերանորոգվում է այդ պետութեան
ոյժն ու ազդեցութիւնը: Երկու տարի ա-
ռաջ մինիստրների նախագահ Մէլին հեզ-
նօքն էր վերաբերվում ձօլային և Դրէյ-
ֆուսի անմեղութեան հաւատացող մի քա-
նի անհատներին. նա ասում էր. «Չը կայ
Դրէյֆուսի դործ, գոյութիւն չունի»: Բայց
եթէ նա լաւ գիտէր, որ ամեն ինչ
լաւ սարքված է կառավարչական և գլխա-
ւորական շրջաններում՝ այդպիսի մի բա-
ցարձակ յայտարարութիւն անելու համար,
մոռանում էր որ կայ մամուլ, իբրեւ հասա-
րակական կարծիք ստեղծող և առաջ տա-
նող մի մեծ ոյժ:

Ի հարկէ, մամուլի մի մասը—և սկզբ-
բում շատ մեծ մասը—բացասական դեր
էր կատարում այդ բանի մէջ. այժմ էլ
նա շարունակում է զղուել միջոցներ դոր-
ծադրել մարդկանց միտքը թունաւորելու,
խաւարը աւելի ևս խտացնելու համար:
Նա հանդիսանում է իբրեւ մի սովալի չա-
րիք իր բռնած ընթացքով, իր ամբողջ
հաւանութիւններով: Բայց հարցնում ենք.
ի՞նչ տարաւ նա, ի՞նչ օգուտ ունեցաւ,
բացի խայտառակվելուց: Եւ խայտառա-
կողը, ծաղրի առարկայ դարձնող դար-
ձեալ ազատ մամուլն էր: Համահասարա-
պագութեամբ մրցող հակառակորդները
վերջ ի վերջոյ ներկայացրին այն տեսա-
րանքը, որ արդարութիւնը, ճշմարտութիւ-
նը գլուխ արքայադուրս և չարիքը թաղ-
վեց ցեխի մէջ: Այսպէս կը լինի և ուրիշ
շատ դէպքերում: Մի ազգ, որ չէ վախում
լոյսից, որքան էլ նա պայծառ և աչք ծա-
կող լինի, չի վախի այդ լոյսի ամեն տե-
րէ թշնամիներից, որքան էլ զղուելի տե-
սեն նրանք, որքան էլ միւրեցնելու, աչք
կապելու ընդունակութիւն ունենան: Սըր-

ցութիւն ազատ հրապարակի վրա—այս է
եղել Փրանսիայի տղային ոյժը: Եւ եթէ
այդ ոյժը չէ դաւաճանել նրան մի ամբողջ
դարի ընթացքում, ի՞նչ հիմք կայ վախե-
նալու թէ նա այսուհետեւ կը դաւաճանէ:
Ահա թէ ինչու ասացինք, որ հասկանալի
է թէ ինչու պարլամենտը կընդգիմանայ
սենատի այն ծրագրին, որ իբրեւ պաշտ-
պանողական միջոց սեղմունքներ և սահմա-
նափակումներ է առաջարկում մամուլի
դէմ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԵՐ ՆԱԽԱՐԱՐԻՆԱԲԵՐՈՂՆԵՐԸ

Անդրկովկասի ակցիոյային տուրքերի հաւաք-
ման կառավարիչը, իր նորեւս հրատարակած
հաշիւի մէջ 1897 թւի համար, տխուր եղբակցու-
թիւնների է գալիս Բագուի նախարարինաբե-
րողների եռանդի և հմտութեան մասին: Այդ
հաշիւի համաձայն մեր նախը իր արտահանման
կէտում: Բագուում արժէ արդիւնաբերողների
համար պուղը մօտ 30 կոպէկ, իսկ ամերիկա-
կան նախը իր արտահանման կէտերում՝ Փի-
լադեֆիայում և Նիւ-Եթիպում՝ 35 1/2 կոպէկ: Ա-
ւելացնելով դրա վրա արտահանման կէտերից
մինչև սպառման կէտը հասնելու ճանապարհա-
ծախսը, կը տեսնենք, որ այնպիսի վաճառ-
տեղերում, ինչպէս Փերմանիա, Անգլիա, Բել-
գիա և Փրանսիա, մեր և ամերիկական նախը
արժէքը հաւասար են, իսկ Միջերկրական ծովի
նաւահանդիսաներում և ծայրագոյն Արևելքում
Բագուի նախը արժէ նախաւորելու համար
պուղին 9—15 կոպէկ պակաս, քան ամերիկա-
կանը ամերիկացիների համար: Չը նայելով դը-
րան, մեր նախը ոչ մի վաճառանոց ձեռք չէ
բերել, իսկ եղածներից շատերը նոյն իսկ կորց-
նում է: Մինչև 1895 թվի համաշխարհային վա-
ճառանոցները ներմուծված նախը 29,90%
էր կազմում Ռուսաստանի նախը, այդ թւից
յետոյ միայն 26,60%, իսկ եթէ վերջիններս միայն
Ներքին գործի նախը ներմուծման մէջ տարեց-
տարի թուղանում է, ընկնելով 280°-ից (1889
թ.) 170°-ի (1897 թ.): Ամենամեծ կորուստ
մեր նախը կրել է Անգլիայում, Բելգիայում,
Հոլանդիայում և ծայրագոյն Արևելքում՝ Չի-
նաստանում և Եսպանիայում: Մինչև վերջին
ժամանակներս գերիշխող դեր նա պահպանել է
միայն Աւստրիայում, Թիւրքիայում, Յունաստա-
նում, Փանթերի ափերի երկրներում, Ալբա-
նիայում և մասամբ Փրանսիայում ու Հնդկաս-
տանում, այսինքն ամենամօտակայ վաճառանոց-
ներում, որտեղ պայմանները առանձնապէս նը-
պաստաւոր են նրա համար:

Այդ տարբերակ փաստը հաշիւ կազմող բա-
ցատրում է նրանով, որ մեր նախարարինա-
բերողները չափազանց մեծ օգուտներ ստանա-
լով այժմ, երբ նրանք գործը տանում են ամե-
նաշահապետական ձևերով, չեն կամենում աչ-
խատանք և դրամագլուխ գործ դնել զարգացնե-
լու համար արդիւնաբերողներից այն ուղղու-
թեամբ, որ պահանջում են համաշխարհային
վաճառանոցի պայմանները: Եթէ համեմատենք
նախը գները Լոնդոնում և նրա ունեցած ար-
ժէքը նախարարինաբերողների համար, կը տե-
սենք, որ 1895 թվին բաղադրիչները զուտ արդիւնք
են ունեցել պուղին 41 կոպէկ, 1896 թվին 43
կ., և 1897 թվին՝ 22 կոպէկ, այսինքն աւելի
քան 100% մի բուլղուն: Բայց ինչ են արել նը-
րանք: Ոչինչ: Ոչ սեփական շուկաներ են չի-
նել տուել հեռավոր նաւարկութեան համար, ոչ
էլ պահանջներ ու գործակալութիւններ են հիմ-
նել արտահանմանում: Ամբողջ առեւտրական նաւ-
թի տեղափոխութիւնը, չնայն բացառութեամբ,
կատարվում է օտարազգի շուղեւաւորով, և ամ-
բողջ նախարին առեւտուրը համաշխարհային
վաճառանոցներում կենտրոնացած է արտասահ-
մանեան ֆիրմաների ձեռքում, որոնք ամենին
չափ չունեն Բագուի արդիւնագործութեան
ծաղկման մէջ, այլ գնում են նախը այն դէպ-

քում, երբ գինը ձեռնտու է իրանց: Այդ առեւ-
տրական միջնորդութիւնը նստում է մեր նաւ-
թարգիւնաբերողների վրա մօտ 4—8 կոպէկ
պուղին: Հասկանալի է, որ այդպիսի պայման-
ներում մեր նախը դժուարութեամբ կարող է
նուաճել նոր վաճառանոցներ ու պահպանել ներք
և կուր մղել նոր երևան եկող մրցողների հետ,
Ռումինիայի, Գալիցիայի և Չոնդան կղզիների
նախըի հետ:

Հետաքրքիր փաստ է և այն, որ ամերիկա-
կան նախը տալիս է երեք անգամ աւելի մը-
շակված արդիւնքներ, քան Բագուինը, չը նայե-
լով որ հում նախը արտադրութիւնը գրեթէ
նոյնն է Ամերիկայում և Բագուում:

Ամերիկացիք գործը տանում են խելացի կեր-
պով, մինչդեռ մենք յափշտակվելով նախը շատը-
վան ունենալու ցանկութեամբ, ապարդիւն կեր-
պով կորցնում ենք անազնի քանակութեամբ
հում նախը: Մեղանում հում նախը մշակութեան
մէջ առաջարկութեամբ տեղ յետադիմութիւն
և նկատվում տարեցտարի և ամբողջ արդիւնա-
բերութիւնը ստանում է նախարին մնացորդ-
ների արտադրութեան ընաւորութիւն, մինչդեռ
այդ մնացորդները, իբրեւ վառելիք, չեն հա-
մապատասխանում ապահովութեան պահանջ-
ներին:

Հաշիւ կազմողը ի վերջոյ դալիս է այն եղ-
րակացութեան, թէ կառավարութեան օժան-
դակութիւնը (միայն վերջին երեք տարվայ ըն-
թացքում կառավարութիւնը 10 միլիոնի օգուտ
թիւն է հասցրել, պակասեցնելով երկաթուղի-
ների տարիքը) միմիայն նախարարինաբերող-
ներին է օգուտ տուել, աւելացնելով նրանց ար-
դիւնքը:

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԹՅՈՒՆ

Յուլիսի 23-ին

Կար ժամանակ, երբ մեր երկրացիները հա-
ւաքական ոյժով գործելուց խոյս էին տալիս,
ինչպէս մահմեդականը խոյս էին տալիս: Ընկերական
հիմունքների վրա գործել չէին ցանկանում, ու-
րովհետեւ չէին հաւատում իրար. իւրաքանչիւրը
իր համար առանձին գործում էր. վնասվում
էր արդեօք, կամ օգտվում,—միմիայն ինքը գի-
տէր: Իսկ այսօր նա հասկացել է, թէ որ աս-
տիճանի լաւ է և օգուտն է հաւաքական ոյժով
գործելը: Նա տեսնում է, որ Եւրոպայում ոչ մի
գործ չէ սկսվում մենակ, այլ միշտ հաւաքական
ոյժով: Մենք մտադիր չենք ներկայ յղուածում
բացատրել, թէ արդեօք ինչու համար է լաւ
հաւաքական ուժով գործելը, որովհետեւ այդ այն
աստիճան պարզ է, որ կարօտ չէ ոչ բացառ-
ութեան և ոչ էլ փաստերի: Մենք կարճ կա-
սենք. միշտ ձեռնառու է հաւաքական ուժով
գործելը:

Այդ ճշմարտութեան իմաստը պարզվեց նոյն
իսկ մեր հասարակ ժողովրդի համար, երբ
Բագու կազմվելին մի քանի նախարարինա-
բերական ընկերութիւններ և երբ մեր հա-
սարակ ժողովուրդը իր արին քրտնքով վառ-
տակած կոպէկները հաւատաց այդ ընկերու-
թիւններին: Սակայն այս ընկերութիւնների ղե-
կավարները կանգնեցին արդեօք իրանց կոպէկ-
բարձրութեան վրա—անա հարց, որին հարկա-
ւոր է պատասխան և բացատրութիւն: Տարա-
բաղաբար ոչ, կը պատասխանենք մենք: Հա-
սարակ ժողովրդի հաւատը ի չար գործ դնել
գալթակզեցնել, թերահաւատութիւն մտցնել նրա
մէջ, դրանք վատ և անարդի գործեր են:

Յայտնի է, որ նորակազմ ընկերութիւններից,
բացի «Արամադա» ընկերութիւնը, ոչ մէկը դեռ
նախը չունի. նրանք դեռ հոնք են փորում
Իսկ ինչ էր կատարվում մի վեց ամիս սրանից
առաջ. նորակազմ ընկերութիւնների փայերը
իրար ձեռքից կառով էին խլում, վճարելով
կրկնապատիկ, եռապատիկ գներ: Լրագիրների
մէջ իրանք իրանց ընկերութիւնների համար
զանազան բեկումներ էին գրում, գովում, փա-
ռաքանում և երկինք էին բարձրացնում: Հա-
սարակ ժողովուրդը, որ չուտով խաբվել գիտէ,
առանց հաշիւ տալու աշխատում էր և ամեն

ջանք դործ դնում, որ այդ փայերից ձեռք բերելու ընկերությունների մեծապատիվ հիմնադրված են իրանք հրապարակով յայտնում էին, որ պատրաստ են գնել իրանց ընկերությունների փայերը կրկնապատիվ գնեցով, ի հարկէ, համոզված լինելով, որ մի էրկու օրից յետոյ աւելի թանկ գնով ուրիշի վրա կը ծախեն: Այս արդէս արհեստական կերպով փայերի գնները առասպելական բարձրութեան հասցրին:

Այժմ ամեն ինչ պարզվել է, փայերի գնները ընկել են, նոյն իսկ նրանց համարող գնի ըստ ուրիշը չեն տալիս: Հասարակ ժողովուրդը դո՛ւս է դառել մի քանի պարոնների հարստամարտական անհատական ցանկութեան: Պատմում են թէ այդ ընկերություններից մէկի փայերը վերադարձնում են, սակայն ընկերությունները դրամաբեկում փող չը կայ վերադարձնելու, ուստի նրանք էլ դիմում են դատարանի օգնութեան: Այժմ թիֆլիսի այդ պարոնների խղճի ձայնը մեռած էր, որ կեղծքերու և հարստահարելու համար ընտրեցին հասարակ ժողովրդին: Ցաւալին այն է, որ այդ ընկերությունները ղեկավարները ինտելիգենտներ են մեծ մասամբ: Այժմ եկել է հասարակ ժողովրդից պահանջներ, որ նա հաւատով վերաբերվի դէպի նրանց: Դա ցաւալի է, բայց իրողութիւնն է:

ՆՅՈՒՆԻՆ ԼՈՒՐԻՆԵՐ

Շուշու և Զիրբայէլի դաւաճներում և Քուլայի նահանգում մեծաքանակութեամբ բաց անելու համար կազմված է մի ակցիոներական ընկերություն 500,000 ռուբլի դրամալիով, որ բաժանված է 2000 ակցիոնների, իւրաքանչիւր ակցիոն 250 ռուբլի արժողութեամբ: Ընկերությունն հիմնադրվել է շուշուի վաճառական Դանիէլ Ահարոնեանց:

Լրագիրները ասելով, կառավարչապետ իշխան Գուրգեն Թիֆլիս կը վերադառնայ մինչև օգոստոս ամսի կէսը:

Պետական բանկի Թիֆլիսի բաժինը մտադիր է մօտ ժամանակներում Կուկիա և Հալաբաք բաղադրամասերում խնայողական դրամարկղներ բանալ:

Երկարատև շրջերից և չորութիւնից յետոյ, վերջապէս յուլիսի 26-ին և 27-ին անձրևներ և՛ կան Թիֆլիսում և մի փոքր զովայերին օդը:

Պարսկաստանում ռուսաց բանկի դանձապահի սպանութեան դործում մեղադրվող պաշտօնակից պորուշիկ Զէրբանով յուլիսի 22-ին «Փամարա» շոգենաւով բերվեց Բաքու: Գանձապահի սպանութեան դործը, «Կառնի» լրագրի խօսքով, կը բնովի Բաքուի նահանգական դատարանում:

Կարսի երկաթուղու գնացքները դուրս են գալիս Թիֆլիսից՝ երեքշաբթի, չորեքշաբթի և յաբաթ օրերը, ցերեկվայ 12 ժամ 44 րոպէին, իսկ Թիֆլիս են հասնում Կարսից՝ երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերը, ցերեկվայ 3 ժամ 22 րոպէին: Կանոնաւոր երթևեկութիւնը կը սկսվի միմիայն հոկտեմբեր ամսին:

«Կառնի» լրագիրը հաղորդում է, թէ Բալխաշայում, Փիթոմիլների գրասենեակում ծառայող թիւրքահայտակա Մ. Գ. Թաշաթեանը, զոդաւարով 5,000 ռուբլի, անհետացել է:

Այս տարի Խաղաղի տեխնոլոգիական ինստիտուտի առաջին կուրսում կայ 213 ազատ տեղ, ընդունելութեան քննութիւնները կը սկսվեն օգոստոսի 17-ին: Կիւմլի պոլիտեխնիկական ինստիտուտում՝ 321 տեղ, որոնցից մեքենայական մասում՝ 98, քիմիականում՝ 59, ինժեներականում՝ 86 և գիւղատնտեսականում՝ 78: Խնդիրների ընդունելութիւնը վերջինում կը տեւի այս տարի մինչև օգոստոսի 10-ը: Մօսկվայի կայսերական համալսարանի բոլոր բաժանմունքների առաջին կուրսերը կընդունվեն մինչև 250 հոգի: Խնդիրները ընդունելութիւնը բոլոր համալսարաններում կը վերջանայ այս տարի օգոստոսի 10-ին:

Պրոֆէսոր Գոկուշանով այս օրերս գիտնական նպատակով բարձրացաւ Արարատ սարը:

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ յայտնի ռուս հրապարակախօս Նիկոլայ Միխայլովիչի վերջացրել է «Կարբեր Օպաշինսկա» վէպը, որ երկի կը սկսի ապրիլ «Русское Богатство» ամսագրի մօտակայ համարներից մէկում:

Պետերբուրգի կանանց բարձրագոյն կուրսերի դիւանատունը յայտնում է լրագրիները միջոցով, թէ այս աշնան ընդունելութեան քննութիւններ չեն լինի այդ կուրսերում:

Ինչպէս «Новое Время» լրագրին հաղորդում են Կիւմլից, մերժված է XI հնագիտական ժողովին մասնակցողներից մի քանիսի խնդրքը՝ դեկտեմբերի կարգով մայրօրսիական բարբառով:

Հին-ՆԱԽԻՉՆԻԱՆԻՑ մեղ գրում են. «Շրջերի պատճառով առաջ են եկել դանդաղան տեսակ հիւանդութիւնները՝ աչքացաւը, փորձարիւնը, տենդը, կապոտ հազը դո՛ւսեր են տանում. տենդը, հազն ու փորձարիւնը կոտորածներ են անում մանուկների չրջանից թէ քաղաքում և թէ դիւղերում... Նրանք է եկել մօրեկը փոքրիկ խմբակներով, որ կըմոտում, ուսում է խաղողի ու բօստաններ տեսնելու և բաժակի ծաղիկները»:

ՎԱՂԱՐՇԱՊԱՍԻՑ մեղ գրում են. «Հաստատ աղբիւրից տեղեկացանք, որ ձեմարանի նախկին տեսուչ պ. Կ. Կոստանեան, հրաժարվելով իր պաշտօնից, խնդրել է Վեհափառից կենսաթոշակ, որպէս զի միջոց ունենայ ապրելու: Եթէ տանեակ տարիների ընթացքում տարեկան 2—3 հազար ռուբլի ռոճիկ ստացողը, կղզիացած կենք վարելով՝ Վաղարշապատի պէս գիւղում և չը մասնակցելով ոչ մի հասարակական գործի, խնայելով նոյն իսկ տարեկան 5 ռուբլի Բարեգործական ընկերություն տեղական ճիւղի անդամ դրվելու համար, ապրուստի միջոց չունի և կարօտ է կենսաթոշակի, ապա ինչ պէտք է լինի մեր նախկին ծխական դպրոցների ուսուցիչների նիւթական վիճակը, որոնք պահպանում էին համարանք ընտանիքը, համ էլ մասնակցում բոլոր հասարակական գործերում»:

Նոյն տեղից մեղ գրում են. Արդէն հաստատ է, որ ձեմարանի տեսուչ պ. Կ. Կոստանեանց հեռացել է իր պաշտօնից, իսկ նրա տեղ նշանակվել է նրա օգնական Կարապետ վարդապետը: Ուրեմն ձեմարանի վիճակը այսուհետեւ աւելի ևս վատ պէտք է լինի, որը երևում է հէնց այժմանից: Կուրս ենք, որ այն բոլոր ուսուցիչները, որոնք յայտնի էին իրանց անընդունակութեամբ և ծուլութեամբ և որոնք, պ. Կոստանեանի հրաժարականից յետոյ, յոյս չունենալով նոր հրաւիրելի տեսչի սերը և համակրութիւնը վայելելու, որոշել էին իրանց համար գործ փնտռել Թիֆլիսում կամ Բաքուում, այժմ, Կարապետ վարդապետի հաստատվելուց յետոյ, կրկին մնում են իրանց պաշտօնում»:

ԷԶՄԻԱՄԻՆԻՑ մեղ գրում են. «Տեղիս պոլիցիալին հասած՝ տեղեկութիւններից երևում է, որ Էլմիամիլի դաւաճում, Վաղարշապատից շատ մօտ գիւղերում, երևացել է բո՛ւ ենի (vishni): Մի քանի անալոգ դէպքերից յետոյ բորենին տարել և կերել է՝ Խոնառող գիւղից մի 12 տարեկան տղայ, Հալաբաթ գիւղից մի 13 տարեկան աղջիկ, Աղջապաղ գիւղից մի 2—3 տարեկան երեխայ և մի քանի ընտանի կենդանիներ: Պոլիցիան խիստ միջոցներ է ձեռք առել կենդանուհի սպանելու, սակայն, լուրերին նայելով, մեր գիւղերով չրջող բորենին ոչ թէ մէկ հատ է, այլ երեք հատ, որովհետեւ միևնույն ժամանակ բաւական հեռաւոր տեղերում երեւալից են այդ մարդկերի գաղանները: Լուռ ենք, որ դաւաճապետը 50 ռուբլի վարձատրութիւն է խոստացել նրան, ով կը սպանի բորենուն: Գիւղական ազգաբնակչութիւնը և գաղթականները, որ սովորաբար կտուրների վրա են ընում, ա՛ն ու դողով են անցկացնում գիշերները»:

ԿՅՁՈՐԻՑ մեղ գրում են. Մեղ մօտ էլ վերջերսում շրջեր են լինում Անձրե չէ գալիս: Յուլիսի 24-ին, կէսօրից քիչ անց, յանկարծ բարձրացաւ սաստիկ քամի, ամբողջ Կօջօրը մի րօպէում կորաւ թանձր փոշու մէջ, բայց անձրե դարձեալ չեկաւ, թէ երկինքը ծածկվեց սև ամպերով և նոյն իսկ որոտի ձայներ էլ լսվեցին: Մի ժամից քամին դադարեց և սկսվեց մի և նոյն չորային ու տաք եղանակը»:

Մեղ գրում են ԹԵՂՕՍԻՍԻՑԻՑ. «Ձը նայելով սաստիկ շրջերին, Ռուսաստանի ամեն կողմերից գալիս են հիւանդներ՝ ծովային վանդա ընդունելու, հիւանդների հոսանքը շատացաւ մանաւանդ յուլիսի սկզբներին: Նրանք աւելի շատ կը լինէ՛ք թմբկադուլների թիւը, բայց շատերը, վախենալով վարակվել արտասահմանեան նաւերով Արաքսիայից եկող մասնակցականներից, որոնք իբր թէ իրանց հետ ժամաւախ են բերում, գրեթե են ուրիշ քաղաքներ: Սկզբնականներն

էլ կարծես փչի վրա են նստած: Նրք ուխտաւոր թուրքերը, կարանտինից ազատվելով, դուրս են գալիս քաղաք—թէ տեղացիները և թէ եկւորները փախչում են ուղղակի փողոցից»:

ՀԱՄԻՈՒԹ գիւղից մեղ գրում են. «Յուլիսի 19-ին, առաւօտեան ժամի 9-ին, մեր գիւղը ժամանեց Գանձակի նահանգապետ գէնեբալ Կիրէնի և իշխանից գնդապետ Պողոթն Գոլի տանը: Ժողովուրդը, խուռն բաղմունքամբ, առաւօտից հաւաքվել էր տան առաջ, և սպասում էր նահանգապետի անից դուրս գալուն: Նահանգապետը դուրս եկաւ, բարեկեց և հարցրեց ժողովրդի կացութեան մասին, հարցրեց այս տարվայ բերքերի և ցանքերի մասին: Ժողովուրդը պատասխանեց, թէ քանի տարիներից ի վեր այսպիսի անպտղաբեր տարի չէ եղել: Նահանգապետը, իմանալով ժողովրդի դառն կացութիւնը, խորհուրդ տուեց մի խնդիրքով՝ դիմել մինիստրութեանը, որպէս զի արժեւական հարկերը մաս մաս առնեն: Ի միջի այլոց, գնեբալ Կիրէնի աւելացրեց. «Ես ցանկանում եմ ձեր խաղող կենքը և լաւ ապրուստը: Ժողովուրդը շնորհակալութիւն յայտնեց նահանգապետի տուած բարի խորհուրդներին համար և հեռացաւ դէպի գիւղը»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԼՈՒՐԻՆԵՐ ԹԻՒՐԳԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Վանից գրում են «Արեւելքին».

«Ուշագրորութիւն գրաւող օրուան կարևոր խնդիրը՝ ջուրի խնդիրն է այսօր Վանայ համար: Աւանդաբար կրեան թէ 7 տարին մէկ անգամ պարբերաբար այս երկրին գետակները, առուները, լճերը, լճակները ու աղբիւրները կը պակսին: Կերևայ թէ այս տարուին սկսած է այդ նուազումը, որուն ուղղակի պատճառը անցեալ ձմեռուան և դարման երաշտութիւնն է: Զրադրական տեսակէտով շատ հարուստ է Վան, մասնաւոր թուէ Վանայ հովիտը, զոր ուղղելու համար, ըստ գերմանացի հնագէտ Տրոթ. Պէլլի, Խաղաբան շրջաններէ սկսեալ արուեստական լիճեր շինուած են: Այս լիճերէն նշանաւորը՝ Քէլիչ-Վէօլը՝ զոր Շով Ռուգասի կանուան է յիշեալ գիտնականը, անոր ամբարտակին մէջ գետեղումը բեռնագիր արձանագրութիւնը կարգաւոր, այս տարի գրեթէ ցամաք էր, ինչպէս նաև Տօնեայ և Սղապու լիճերը, որոնք շատ քիչ ջուր տուին Վանայ այգետաններուն և արտերուն: Իսկ լճակները, որոնք բուն այգետաններ ջրերու յատկացում են, գրեթէ կէս առ կէս նուազած են և հետեաբար անբաւական: Բարեբաղդաբար մայիսի և յունիսի սկիզբները տեղացող անձրևները՝ հունձները փնտրելու փառնգէ փրկեցին. անձրևը մըն ալ, և ահա լաւ հունձը մը պիտի ունենանը: Զուրի նուազութեան առաջ բերած անպատեհութիւններէն մէկն ալ ջրաղացներու դադարին է, որով ալիւրը ցորենէն համեմատապէս շատ սուղ կը ծախուի. ժողովուրդը իրան 50 փարա գէշ եկիւմած հաց կուտէ՝ մինչդեռ ցորենի չափը 45—53ի կը ծախուի: Փոռերը շատ անգամ կը դադարին ալիւր չը գտնելով:

«Տեղական կառավարութիւնը ձեռնարկած է այժմ Խաւասորի հովիտէն դէպի Վանայ հովիտ բերելու մը բանալ Խօշապազ գետին ճիւղը մը բերելու և Նոր-Վեդի ու չրջակայ դաշտերը ջրելու համար. շատ օգտակար է այս ձեռնարկութիւնը, որուն ոգի ի բուն կաշխատուի:

«Տրոթ. Պէլլ» Թալիքա-Գալէի պեղումները չարունակելով հանդերձ, սկսած է նաև պեղումներ կատարել Այգետանեայց հին թաղերէն մէջ, դէպի հարաւ արևմուտք: Այս գիտնականը որ մանրագինին և խնամոտ կերպով ուսումնասիրեց Վանայ ծովու շրջագոյնի հնագիտական դոստին, և գրեթէ բեռնաղբիւր չը մնաց որ չը կարգուի, կերևայ թէ շատ նորութիւններ պիտի տանի գիտնական աշխարհին, Շուլցի, Ռոլինսի, Նիլեր-Նատի շատ մը տեսութիւնները հինգնելով: Իրեն մասնաճիւղը ըրած է Խաղաբան ուսումնասիրութիւնները, զորս Գաղղէացիներէն և Հայերէն բոլորովին տարբեր ցեղ մը կը համարի, աւելի մօտ հին Խաղաբաններուն, որոնց երկրին հնագիտական ճարտարապետութեան համանման կը տեսնէ այս կողմերու պեղումը շէնքերը»:

«Թարբերդից գրում են նոյն լրագրին»:

«Այս օրերս գերմանացի ասիախօս մը եկաւ հոս, պրոֆէսոր Լէհման, երիտասարդ գիտնական մը, որուն համար կըսուի թէ արդի առաջինական արգաւոր ասիախօսներէն և ասորական և խաղաբան արձանագրութիւնները բաղկանեցնէ: Պրոֆէսոր Լէհման գիտական և այլ հետազոտութիւններ ընկէ ետքը, բանախօսութիւն մը արտասանեց բողոքականներու գլուխէն մէջ,

յայտնելով թէ նոր բեռնագիրներ գտած ու պատմական կարևոր արդիւնքներ ձեռք բերած է: Յայտարարեց թէ Տիարպէթի չորջակները՝ ապաւածի մը վրա՝ որուն տակէն Տիրքիւրը կը հոսի, նոր բեռնագիրներ գտած ու կարդացած է: Շատ մեծ հմտութիւն ունի բեռնագիրներու մասին, զորս տեսածին պէս կը կարդայ առանց մտածելու, ու շատ ալ դիւրութեամբ Բողոքականներու ըտէճին մէջ տուած իր ալը բանախօսութեան միջոցին, յայտնեց նաև թէ մինչև հիմա բեռնագրերու մէջ գտնուող փիլ բառը արձանագրութիւն կը մեկնաբանուի երբեք, սակայն Վանի մէջ ըրած հետազոտութիւններէն հասկացեց թէ յրանց կը նշանակէ այդ բառը:

«Պրոֆէսոր Լէհման կատարելապէս կը հասկանայ հայերէն և բաւական ալ կրնայ խօսիլ մեր լեզուն՝ գէթ իր զաղափարները հասկցնելու չափ: Մօտ օրէն Նիշի կը մեկնի, իր հետազոտութիւնները շարունակելու և նոր բեռնագիրներ կարդալու համար»:

ՆԱՍԱԿ ՖԻՆԱՆՍԻՑԻՑ

Պարիզ, յուլիսի 16-ին

Ֆրանսիային է վիճակվում անցեալի քաղաքակրթութիւնը պատմութեան յանձնելուց առաջ մէկ էլ բաց անել աշխարհի առջև, քաղաքակրթ մարդկութեանը ցոյց տալ կուլտուրայի յաջորդական բայերը, այսպիսով կրնել 19-րդ դարը մի համաշխարհային ցուցանանդէտով և առաջնորդել ազգերին դէպի պատմական մի նոր շրջան, դէպի 20-րդ դարը: Եթէ 70—71 թիւերի չը տեսնված համազգային դժբաղդութիւնի ընդամենը 18 տարի յետոյ Ֆրանսիան 89 թիւի ցուցանանդէտը կազմել կարողացաւ իր բարձր քաղաքակրթութեան, իր բարոյական ոյժի կենդանի ապացոյցը տալով, ապա վստահաբար կարելի է ասել, որ նա այս անգամ ևս առաւել պատուով կը կատարէ իր յանձն առած դերը և որ առաջինկայ ցուցանանդէտը կը գերազանցի առաջինից թէ իր մեծութեամբ և թէ իր քաղաքակրթական ճիւղութեամբ: Արդարև մեծ է այս ազգի բարոյական ոյժը:

Ձը նայելով ներքին անընդհատ պեղումներին, որոնք անդրադարձնում են այս երկրը մի ծայրից մինչև միւս ծայրը, քաղաքակրթութեան գործն այստեղ կանդ չէ առնում, երկրին առաջնորդող դիւրի և սրտի տէր մարդիկ չեն պակասում, կուլտուրական կուրի դաշտը պարապ չէ մնում: Ֆրանսիայի ներքին ոյժերի բաղադրումը, կուլտուրականների կատաղի պայքարից են դուրս ցայտել միշտ այն մեծ զաղափարները, որոնց կայծերը ողջ աշխարհում մտքերի հրդեհ են առաջ բերել: Հէնց այսօր ողբան կիրք, ըրանք են, ատելութիւն, որքան ինտելիգենտ, կուլտուրականներ, ինչ կատաղի կուրի է իշխում Ֆրանսիայում. հեռուից լսողները, լրագրիների պատմաններով դատողները պիտի կարծեն, որ Ֆրանսիայում չուտով էլ բար քարի վրա կը մնայ, որ այս մեծ երկրին իր վերջնական կրթական նախնի թաղից օրում է: Սակայն դա չարաչար սխալ է. Ֆրանսիան լաւ ծանաչելու համար մօտիկից պիտի տեսնել և ապա դատել, բոլոր այդ արտասովոր պայմանները մէջ քաղաքակրթութեան գործն անընդհատ շարունակվում է, ազգն ապրում է իր սովորական կեանքով, նրա ներքին կենսական երակը դարձում է ուժգին կերպով: Ֆրանսիայի հանձարը, նրա ստեղծագործող ոգին ապրում է ներքին խիտ ու ապակառուցիկ ներքինից շատ վեր, և ոչինչ չէ կարողանում կանգնեցնել նրա կուլտուրական յաղթական դնացը:

Մի կարգացեց այդ լրագրերը, խցեցեք ձեր ականջները փողոցի ազդուից, երբեմն դիտաւորութեամբ տարածած և մեծ մասամբ չափազանցած լուրերի առաջ և հանդարտ քայլերով իշխեք մինչև Սենա գետը, նստեցեք մի նաւ և ապա դնացեք դէպի Մարսեան դաշտերը: Այդ դուր կը տեսնեք այնտեղ իսկական Ֆրանսիան, կուլտուրական մեծ Ֆրանսիան—դուք կը տեսնեք ցուցանանդէտի աշխատանքները, պատրաստութիւնները, շէնքերը: Օր օրի վրա երկաթեայ հաստ, կարմրաւուն ձողերն իրար են կցվում վարպետութեամբ և կազմում են հազարաւոր շէնքերի հսկայ կամերներ. անցում են մի քանի օրեր և ահա քար ու կրով այդ կմախքից մի հրաշակեք է կազմվում, ճարտարապետական մի սիրուն գործ: Ներքազդի բոլոր կողմերից ազգերն իրանց դարերով մշակած ձայնը, իրանց ճարտարապետական, գեղարուեստական, արդիւնագործական հմտութիւնների ամենամիկընդին արդասիւնները, ինչպէս և նախնականները, ուղարկել են այստեղ, յանձնել Ֆրանսիային, որ նա իր սեփական հանձա-

